ԷԴՈՒԱՐԴ ՊՈՂՈՍՅԱՆ

ՆՈՐԱՆԿԱԽ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ 1990-2001թթ.

Ինչպես արդեն նշել ենք անկախության հանրաքվեի կապակցությամբ, անմիջապես դրանից հետո ընդունված աշխարհի երկրների խորհրդարաններին եւ կառավարություններին ուղղված դիմումում Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը կոչ էր անում նրանց ճանաչել ՀՀ անկախությունը եւ նրա հետ հաստատել դիվանագիտական կապեր:

Փաստական առումով Հայաստանի Հանրապետության անկախությունը առաջինը ճանաչել եւ նրա հետ այդ հենքի վրա դիվանագիտական հարաբերություններ էր հաստատել ՀՀ անկախության հանրաքվեից ուղիղ երկու ամիս անց՝ 1991 թվականի նոյեմբերի 21-ին նույնպես նորանկախ Լիտվայի Հանրապետությունը[1]: Հաջորդը դեկտեմբերի 12-ին ՀՀ անկախությունը ճանաչել[2], իսկ նույն ամսվա 21-ից էլ դիվանագիտական հարաբերություններ էր հաստատել Ուկրաինան[3]: Իսկ այսպես կոչված հեռավոր արտերկրից առաջինը ՀՀ-ն ճանաչել եւ նրա հետ 1991թ. դեկտեմբերի 25-ին դիվանագիտական հարաբերություններ էր հաստատել Ռումինիան[4]:

Հասկանալի պատճառներով նորանկախ Հայաստանի Հանրապետության համար առանձնահատուկ նշանակություն ուներ Ռուսաստանի Դաշնության կողմից 1991թ. դեկտեմբերի 17-ին ՀՀ անկախության ճանաչումը[5]: Իսկ հաջորդ օրն իր հերթին Հայաստանը ճանաչեց Ռուսաստանի անկախությունը: Այդ մասին ՀՀ պաշտոնական հայտարարության մեջ մասնավորապես ասվում էր. «Հայաստանի եւ Ռուսաստանի ժողովուրդներն առաջին հարյուրամյակը չէ, որ միմյանց հետ կապված են անկեղծ բարեկամական կապերով, եւ մենք վստահ ենք, որ մեր երկու ինքնիշխան պետությունների միջեւ միջպետական հարաբերությունների հաստատումն ու զարգացումը միայն կնպաստեն բարեկամության խրթացմանը»[6]: Ռուսաստանյան Դաշնության հետ դիվանագիտական հարաբերությունները հաստատվեցին 1992 թ. ապրիլին[7]: 1991 թ. դեկտեմբերի 25-ին ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշը հայտարարեց, որ իր երկիրը պաշտոնապես ճանաչում էր Հայաստանը, որպես ինքնիշխան պետություն[8]: Հաջորդ տարվա հունվարի 7-ից երկու երկրների միջեւ հաստատվեցին

1 Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 22 նոյեմբերի 1991:
2 Տե՛ս անդ, 15 հունվարի 1992:
3 ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 190, թ. 1-6:
4 ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 188, թ. 1-7, «Հայաստանի Հանրապետություն», 13 դեկտեմերի 1991, 15 հունվարի 1992:
5 «Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր», № 24(1004), 31 դեկտեմբերի 1991, էջ 55, Հայաստանի Հանրապետություն, 18 դեկտեմբերի 1991:
6 «Հայաստանի Հանրապետություն», 19 դեկտեմբերի 1991:
7 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 68, թ. 8:
8 Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 27 դեկտեմբերի 1991:

դիվանագիտական հարաբերություններ[9]: Առաջիններից մեկը անկախ Հայաստանը 1991 թվականի դեկտեմբերի 16-ին ճանաչեց Թուրքիան[10]: Այդ մասին Թուրքիայի նախագահ Ա. Դեմիրելի՝ ՀՀ իր պաշտոնակցին հասցեագրված ուղերձում անթաքույց կերպով դրսևորված էր թուրքական կողմի, ամենագլխավոր մտավախությունը կապված Հայաստանի հնարավոր տարածքային պահանջատիրության հետ: Փաստորեն ի սկզբանե Թուրքիան Հայաստանի հետ իր հարաբերությունները սկսել էր կառուցել նախապայմանների լեզվով, դրա համար տվյալ պահին, ըստ էության, չունենալով որևէ հիմք, քանի որ հայկական կողմը մինչ այդ որևէ ձևով տարածքային հարցեր չէր բարձրացրել Թուրքիայի առջև: Քննարկվող խնդրի կապակցությամբ թուրքական ուղերձում մասնավորապես ասվում էր.- «Մեր կառավարությունը, ճանաչելով Հայաստանի Հանրապետությունը, համոզված է, որ Հայաստանը Թուրքիայի հանրապետության եւ մյուս հարեւանների հետ իր հարաբերությունների մեջ հավատարիմ կմնա միջազգային իրավունքի հիմնական եւ հատկապես տարածքային ամբողջականության ու սահմանների անձեռնմխելիության սկզբունքներին...»[11]: Հասկանալի է, որ փաստաթղթում հատուկ շեշտադրում անելով տարածքային անձեռնմխելիության սկզբունքի վրա՝ թուրքական կողմը նաեւ ուղղակիորեն կանգնում էր իր ազգերի ցեղակիցների պաշտպանության դիրքերում, Ադրբեջանի տարածքային պահանջների բավարարումը դարձնելով թուրք-հայկական հարաբերություններում գլխավոր նախապայմաններից մեկը:

Հայաստանի անկախացման տարում ընդամենը 3 ամսվա ընթացքում ՀՀ-ն ճանաչել էին աշխարհի 48 պետություններ, որոնց թվում էին նաեւ Չինաստանը, Իրանը, Հնդկաստանը, Գերմանիան, Մեծ Բրիտանիան, Ճապոնիան, Եգիպտոսը, Մարոկկոն, Մեքսիկան, Իսրայելը, Բրազիլիան, Դանիան, Նիդերլանդները եւ այլն[12]: Հայաստանի Հանրապետության ճանաչման շքահանդեսը ավելի մեծ թափով շարունակվեց 1992 թվականին: Այդ տարի աշխարհի տարբեր կողմերում Հայաստանը որպես ինքնուրույն պետություն ճանաչեցին եւ դրանով իսկ համաշխարհային թատերաբեմում ավելի ամրապնդեցին ՀՀ ինքնիշխանությունը Իտալիան, Հունաստանը, Եթովպիան, Լաոսը, Տաջիկստանը, Արգենտինան, Լիբանանը, Իսպանիան, Ուրուգվայը, Ավստրիան, Էկվադորը, Լատվիան, Պորտուգալիան եւ այլն[13]: 1992 թ. գարնանն արդեն անկախ Հայկական պետությունը ճանաչել էին աշխարհի 101 երկրներ, որոնցից 42-ի հետ հաստատվել էին դիվանագիտական հարաբերություններ[14]: Արդեն նույն թվականի օգոստոսին ՀՀ-ի հետ դիվանագիտական կապեր հաստատած երկրների թիվը հասել էր 58-ի[15]:

Արմատապես փոխվեց հանրապետության արտաքին հարաբերությունների բնույթն ու ուղղվածությունը: Ավելի ճիշտ կլիներ ասել տասնամյակների ընդմիջումից հետո սկիզբ

9 Տե՛ս անդ, 17 հունվարի 1992:

10 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 192, թ. 1-13:

11 Անդ, թ. 2:

12 Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 15 հունվարի 1992. ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 214, թ. 1-4, գ. 196, թ. 1-12, գ. 220, թ. 1-12, գ. 221, թ. 1-8, գ. 229, թ. 1-10, գ. 206, թ. 1-6, գ. 226, թ. 1-8, գ. 199, թ. 1-7, գ. 197, թ. 1-5, գ. 228, թ. 1-5, գ. 193, թ. 1-14:

13 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 233, թ. 1-15, գ. 231, թ. 1-6, գ. 230, թ. 1-4, գ. 235, թ. 1-4, գ. 238, թ. 1-18, գ. 239, թ. 1-10, գ. 241, թ. 1-3, գ. 243, թ. 1-10, գ. 245, թ. 1-18, գ. 247, թ. 1-13, գ. 248, թ. 1-6, գ. 249, թ. 1-4:

14 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 68, թ. 6:

15 Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 5 օգոստոսի 1992:

դրվեց Հայաստանի արտաքին քաղաքականության ու դիվանագիտական գործունեության: Փաստորեն բավականին սեղմ ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության համար ստեղծվեց որակապես բոլորովին նոր մի կարգավիճակ: ՀՀ-ն ձեռք բերեց լիակատար քաղաքական անկախություն, դարձավ միջազգային իրավունքի սուբյեկտ եւ իր տեղը զբաղեցրեց ժողովուրդների իրավահավասար ընտանիքում: Այդ պատմական գործընթացներում որոշակի նոր դերակատարություն պետք է իրականացներ բնականաբար արտաքին գործերի նախարարությունը: Ըստ էության արտգործնախարարությունը խորհրդային շրջանից ժառանգել էր միայն անվանումը: 1944 թվականին ստեղծված այդ կառույցը Խորհրդային Հայաստանի ֆունկցիոնալ առումով ամենաանորոշ պետական օղակներից էր: Դա բացատրվում էր այն պարզ պատճառով, որ ՀԽՍՀ-ն պարզապես զրկված էր արտաքին դիվանագիտական գործառույթներ իրականացնելու իրավունքից: Այդ գործառույթի բացարձակ մենաշնորհը Միությունում պատկանում էր ԽՍՀՄ արտգործնախարարությանը, որը բնականաբար, ծավալել էր միմիայն Խորհրդային կայսրության ռազմավարական ու մարտավարական շահերից բխող արտաքին գործունեություն:

Փաստորեն ազգային սեփական շահերից բխող արտաքին քաղաքականություն վարելը ինքնիշխան պետականության կարեւորագույն հատկանիշներից մեկն է: Դա քաղաքական անկախություն վայելող ժողովրդի անկապտելի իրավունքն է: Անկախ պետականության կառավարման համակարգում այդ նպատակին ծառայող առանձին կառույցի ինքնուրույն, լիաշունչ գործելակերպը երկրի ինքնիշխանությունը խորհրդանշող ամենաակնառու երեւույթներից է:

Նորանկախ Հայաստանի արտաքին գործընթացները համակարգող եւ իրականացնող գերատեսչության առջեւ ծառացել էին բազում խնդիրներ, որոնց հետ հանրապետությունը խորհրդային շրջանում երբեք չէր առնչվել: 1986-ից մինչեւ 1990 թվականը ՀԽՍՀ արտաքին գործերի նախարարության կատարած միակ աշխատանքը եղել էր հենց 1986 թվականին ԽՍՀՄ իշխանությունների պատվերով Օսմանյան Թուրքիայում հայերի ցեղասպանության (1876-1922 թթ.) եւ երիտթուրքերի դատավարության վերաբերյալ ընդհանուր հաշվով 44 մեքենագիր էջի սահմաններում մի քանի տեղեկանքների կազմումը[16]:

Խորհրդային Հայաստանում կես լուրջ, կես կատակ ասում էին, որ հանրապետության արտգործնախարարության ողջ անձնակազմը բաղկացած էր 3 մարդուց՝ նախարարից, քարտուղարուհուց եւ վարորդից: Թվում է ասվածի մեջ կար նաեւ խորհրդային իրականության կողմից աշխարհի անցուդարձից Հայաստանի կատարյալ մեկուսացվածությունը արձանագրող դառն հեգնանք: Իրականում, թեեւ միութենական մյուս հանրապետությունների համեմատ Հայաստանի ԱԳՆ-ի աշխատանքը միշտ էլ որակվել է որպես ամենագործունը, սակայն այնուամենայնիվ ձեւական բնույթ կրող գերատեսչության աշխատակիցների թիվը խորհրդային շրջանում չի անցել 15 մարդուց[17]:

Փաստերը վկայում են, որ Հայաստանի արտաքին գործերի նախարարության գործունեության մեջ արմատական բեկումը սկսվել էր անկախության հռչակագրի ընդունումից անմիջապես հետո: Այդ բանին մեծապես նպաստել էր նաեւ այն հանգամանքը, որ միութե-

16 Տես ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 1, թ. 1-44:

17 Տես «Հայաստանի Հանրապետություն», 11 օգոստոսի 1992:

նական կենտրոնի կառավարման ապակենտրոնացման քաղաքականության արդյունքում Հայաստանում ինչպես մյուս գերատեսչությունները, այնպես էլ արտաքին գործերի նախարարությունը, որոշ հարցերում, սկսել էր օգտվել հարաբերական ինքնուրույնությունից: Ստեղծված իրավիճակում աշխատանքներում բնականաբար մեծացել էր լարվածությունը: Դա բացատրվում էր ինչպես գործունեության բոլորովին նոր, գերատեսչության անձնակազմի համար մինչ այդ անսովոր, ուղղությունների ի հայտ գալով, այնպես էլ նման բազմաբնույթ աշխատանքի համար նախարարության պարզապես սուղ հնարավորություններով: Հենց այդ պատճառով ԱԳ նախարարությանը վերաբերող՝ ՀՀ կառավարության ընդունած ամենաառաջին փաստաթղթերից էր 1991 թ. մայիսին կայացրած որոշումը գերատեսչության ապարատի զգալի ընդլայնման վերաբերյալ[18], որով ԱԳՆ աշխատակիցների թվաքանակը հասցվեց մինչև 120 մարդու[19]:

Քննարկվող ժամանաահատվածում ՀՀ արտգործնախարարությունը որոշակի աշխատանքներ էր կատարել մի շարք պետությունների հետ գործնական կապեր հաստատելու, անկախության ուղին որդեգրած Հայաստանի նկատմամբ խորհրդային հանրապետությունների, արտասահմանյան երկրների դիրքորոշումը նպաստավորելու ուղղությամբ: Անմիջականորեն նախարարության հրավերով Հայաստան էին այցելել մի շարք երկրների դեսպաններ եւ քաղաքական գործիչներ[20]: ԱԳՆ մակարդակով բանակցություններ էին տարվել որոշ երկրների ու հատկապես մեծ տերությունների հետ ուղիղ քաղաքական, դիվանագիտական, հյուպատոսական կապեր հաստատելու նհատակով: Աշխատանքներ էին տարվել միջազգային կազմակերպությունների հետ ուղղակի կապեր հաստատելու եւ ամրապնդելու ուղղությամբ եւ արձանագրվել էին մի շարք կարեւոր ձեռքբերումներ: Այսպես՝ ՀՀ արտգործնախարարության աշխատակիցը անձամբ 1990 թ. սեպտեմբերին մասնակցել էր ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 45-րդ նստաշրջանի աշխատանքներին, իսկ արտգործնախարարության ղեկավարությունը մասնակցել էր Եւրոպայում անվտանգության եւ համագործակցության փարիզյան բարձր մակարդակի համաժողովին եւ այլն[21]: Այդ շրջանում արտգործնախարարության գործունեության կարեւոր եղանակներից էր որպես միութենական հանրապետության արտաքին հարաբերությունների կառույց արտերկրում ԽՍՀՄ դեսպանատների եւ հյուպատոսարանների միջոցով գործունեություն ծավալելը: Այսպես քննարկվող ժամանակահատվածում, այսինքն մինչև ՀՀ անկախության հանրաքվեն, ԽՍՀՄ արտգործնախարարության հետ պայմանավորվածություն էր ձեռք բերվել Հայաստանի համար քաղաքական ու տնտեսական առանձնակի հետաքրքրություն ներկայացնող արտասահմանյան 13 երկրների խորհրդային դեսպանատներ, գլխավոր հյուպատոսություններ եւ միջազգային կազմակերպությունների խորհրդային ներակայացուցչություններ մշտական աշխատանքի ուղարկել ՀՀ ավելի քան մեկ ու կես տասնյակ ներկայացուցիչներ: Աշխատանքներ էին սկսվել նաեւ, մինչ այդ աննախադեպ, մեկ այլ գործընթացի ուղղությամբ՝ հայաշատ համայնքներ ունեցող երկրներում Հայաստանի Հանրապետության առանձին ներկայացուցչու-

18 Տես ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 10, թ. 7:
19 Տես անդ, ֆ. 113, ց. 165, գ. 353, թ. 1-2:
20 Տես անդ, ֆ. 326, ց. 9, գ. 10, թ. 7:
21 Տես ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 10, թ. 2:

թյուններ բացելու նպատակով[22]: Նախնական պայմանավորվածություններ էին ձեռք բերվել նաև Հայաստանում ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Իսրայելի հյուպատոսական ներկայացուցիչներ ունենալու մասին[23] և այլն: ԱԳ նախարարությունը մինչև Հայաստանի քաղաքական անկախացումը ծավալել էր նաև քաղաքական, տեղեկատվական և այլ բնույթի զգալի աշխատանքներ, որոնց իրականացման համար մեթոդական հիմք էին ծառայել մասնավորապես նաև հանրապետության գիտական հասպատությունների՝ ՀՀ ԳԱ արևելագիտության և պատմության ինստիտուտների, Երևանի պետական համալսարանի համապատասխան օղակների թեմատիկ մշակումները[24]:

Հենց այդ շրջանում հանրապետությունը քաղաքական, դիվանագիտական մասնագետ կադրերով ապահովելու նպատակով արտաքին գործերի նախարարությունը հանդես եկավ Երևանի պետհամալսարանում միջազգային հարաբերությունների ֆակուլտետ հիմնելու նախաձեռնությամբ[25]:

Անկախացումից հետո արդեն որակապես նոր իրավիճակում հայտնված ԱԳ նախարարությունը կոչված էր իրագործելու երիտասարդ հանրապետության արտաքին քաղաքականությունը և զուգահեռաբար ստեղծելու հայկական դիվանագիտական ծառայությունը իր բոլոր բաղկացուցիչներով: Արտգործնախարարության հիմնական խնդիրներն էին դառնում միջազգային ասպարեզում Հայաստանի դիրքերի ամրապնդումը և դրանով իսկ ներքին սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծման համար բարենպաստ պայմանների ապահովումը: Բնականաբար ՀՀ արտգործնախարարությունը իր գործունեությունը կառուցում էր հանրապետության ղեկավարության արտաքին քաղաքականության հիմնադրույթների համապատասխան, իսկ դա նշանակում էր, որ գերատեսչությունը առաջնորդվում էր համամարդկային արժեքներով, համաշխարհային հանրության կողմից ճանաչված բարոյական նորմերի հաշվառմամբ, խաղաղության և ժողովուրդների անվտանգության գաղափարներով, ազգերի ինքնորոշման և մարդու իրավունքների պաշտպանության սկզբունքներով:

1992 թ. հունիսի 4-ին ՀՀ Գերագույն խորհրդին արտգործնախարարության ներկայացրած զեկուցագրի մեջ այդ մասին մասնավորապես ասվում էր. «Նախարարությունն իր ամենօրյա գործունեության ընթացքում ձգտում է կիրառել Հայաստանի կողմից ընդունված ՄԱԿ-ի կանոնադրության, Հելսինկիի խորհրդակցության եզրափակիչ ակտի, Եվրոպայի անվտանգության և համագործակցության խորհրդաժողովի և Նոր Եվրոպայի մասին Փարիզի խարտիայի սկզբունքները, որոնք, մեր խորին համոզմամբ համահունչ են զարգացման արդի փուլում հայ ժողովրդի շահերին և նպատակներին»[26]: Անկախացումից հետո մինչև 1992 թ. վերջերը որոշակիացավ նախարարության տեղն ու դերը պետական կառուցվածքում, որոշ չափով հստակվեցին նրա իրավունքներն ու պարտականությունները: Սկզբից ևեթ արտգործնախարարությունը ղեկավարվում էր ՀՀ օրենքներով, նախագահի հրամանագրերով, Գերագույն խորհրդի կողմից ընդունվող ակտերով, կառավարության որոշումներով և կարգադրություններով: Արտաքին քաղաքականության ընդհանուր հարցերի

22 Տես անդ, թ. 3:
23 Տես անդ, թ. 6:
24 Տես անդ, թ. 4:
25 Տես ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 10, թ. 3:
26 Անդ, գ. 68, թ. 3:

վերաբերյալ արտգործնախարարությունը հաշվետու էր Հայաստանի Հանրապետության նախագահին ու կառավարությանը: Արտգործնախարարության գործունեության իրավական հիմքերի ձեւավորման առումով շատ կարեւոր էր 1992 թվականին ՀՀ կառավարության հաստատած՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության կանոնադրությունը, որի համաձայն նրա վրա էր դրվում հանրապետության արտաքին կապերի միակերպ իրականացումը, եւ միջազգային հարաբերությունների կոորդինացումը[27]: Այդպիսով՝ ի դեմս արտգործնախարարության ստեղծվում էին արտաքին քաղաքականության համակարգի ինստիտուցիոնալ հիմքերը:

Հանրապետության համապատասխան իշխանական օղակների՝ արտաքին հարաբերությունների բնագավառում գործունեության իրավական դաշտի ձեւավորման նպատակով ընդունված առաջին փաստաթղթերից էր ՀՀ նախագահի 1992 թ. մայիսի 5-ի հրամանագիրը՝ «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման հանրապետական եւ տեղական մարմինների, գերատեսչությունների, պետական ձեռնարկությունների, հիմնարկների եւ կազմակերպությունների միջազգային գործունեության որոշ հարցերի մասին»[28]:

Նախարարության գործունեության հստակեցմանը միտված եւ ընդհանրապես արտաքին գործընթացներում ՀՀ ինքնիշխանությունը ամրապնդող իրավական ակտերից էր 1992 թ. մայիսին ՀՀ ԳԽ-ի ընդունած «Հայաստանի Հանրապետության դիվանագիտական աստիճանների մասին» օրենքը, որով, հիմք ընդունելով միջազգային պրակտիկան, ՀՀ-ում սահմանվեցին դիվանագիտական 7 աստիճաններ՝ կցորդից մինչեւ արտակարգ եւ լիազոր դեսպան, սահմանվեցին աստիճանները շնորհող լիազոր մարմինները, այդ ուղղությամբ նրանց գործունեության կարգը եւ այլն[29]: Նույն թվականի ամռանը Հայաստանի նորանկախ հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպանի կոչում առաջինը ստացողների թվում էին ՀՀ ԱԳ նախարարի տեղակալներ Ա. Կիրակոսյանը, Ա. Նավասարդյանը, Գ. Ղազինյանը, ՄԱԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցիչ, ԱՄՆ-ում Հայաստանի Հանրապետության գործերի ժամանակավոր հավատարմատար Ա. Արզումանյանը, Անգլիայում ՀՀ գործերի ժամանակավոր հավատարմատար Ա. Սարգսյանը եւ այլն[30]: Նույն 1992 թ. հունիսին ընդունվեցին «Արտասահմանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունների կարգավիճակի մասին»[31] եւ «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի կնքման վավերացման եւ չեղյալ հայտարարման մասին»[32] օրենքները: Առաջինում որոշակիացվել էին ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների կառուցվածքն ու հիմնական ֆունկցիաները, դրանց ֆինանսավորման, շենքային եւ այլ հարցերի լուծման սկզբունքները: Միջազգային պայմանագրերի կնքման կամ դրանք չեղյալ հայտարարելու մասին ԳԽ ընդունած օրենքով սահմանվում էր ՀՀ միջազգային, միջպետական, միջկառավարական եւ միջգերատեսչական պայմանագրերի կնքման, դրանց

27 Տեմ ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 68, թ. 3:

28 Անդ, ֆ. 113, ց. 168, գ. 368, թ. 1-2:

29 Տեմ «Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր», № 9(1013), 15 մայիսի 1992, էջ 5-6:

30 Տեմ «Հայաստանի Հանրապետություն», 30 հուլիսի 1992թ:

31 Տեմ «Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր», № 11(1015), 15 հունիսի 1992, էջ 9-11:

32 Տեմ անդ, էջ 3-9:

վավերացման, կատարման եւ չեղյալ հայտարարման կարգը: Մասնավորապես այդ օրենքով սահմանվեց, որ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը օտարերկրյա պետությունների եւ միջազգային կազմակերպությունների հետ կնքվում են Հայաստանի Հանրապետության, ՀՀ կառավարության եւ պետական կառավարման հանրապետական մարմինների եւ գերատեսչությունների անունից: Այդ օրենքով Հայաստանի Հանրապետության գերագույն խորհրդին էր վերապահված միջազգային պայմանագրերի վավերացման մենաշնորհը: Քննարկվող օրենքով զանազան պատճառներով միջազգային այս կամ այն պայմանագրի չեղյալ հայտարարելու գործընթացի նախաձեռնությունը վերապահվում էր արտգործնախարարությունը եւ այլն: Հիշյալ բնույթի իրավական ակտերի մեջ իր կարեւորությամբ առանձնանում էր նաեւ ՀՀ կառավարության 1992 թ. սեպտեմբերի 19-ի կարգադրությունը՝ «Օտարերկրյա պետությունների եւ ԱՊՀ-ի անդամ պետությունների հետ միջազգային պայմանագրերի գծով ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից իրականացվող գործունեության կարգավորման եւ համակարգման, դրանց կատարման արդյունավետության բարձրացման մասին»[33], որով մասնավորապես պատկան մարմիններին պարտավորեցվում էր միջազգային պայմանագրերը կնքելիս խստիվ առաջնորդվել դրանց վերաբերյալ իշխանությունների ընդունած, արդեն հիշատակված, օրենքներով ու որոշումներով: Փաստաթղթով սահմանվում էր նաեւ պետական համապատասխան օղակների պարբերական հաշվետվությունները կնքված միջազգային միջգերատեսչական պայմանագրերի ընթացքի մասին եւ այլն:

Արտաքին հարաբերությունների կայացմանը զուգընթաց Հայաստանի արտաքին գործերի գերատեսչությունը իրականացնում էր նաեւ նախարարության կառուցվածքային ձեւավորումը: 1992 թվականին արդեն հիմնականում ձեւավորվել էր Հայաստանի ԱԳ նախարարության կառուցվածքը: Այն բաղկացած էր տարածքային, գործառույթային եւ օպերատիվ բաժիններից: Ըստ էության նախարարության կառուցածքը պայմանավորված էր գերատեսչության առջեւ ծառացած 4 խումբ հիմնախնդիրներով: Այդ առումով նախարարության ֆունկցիաներով պայմանավորված գործունեության որոշակի ուղղություն էին կարգավորում օպերատիվ դիվանագիտական բաժինները: Դրանք էին հյուպատոսական, պետական արձանագրության, ներկայացուցչությունների ու դեսպանատների բաժինները: Գործունեության հաջորդ, գործառույթային ուղղությունը ներկայացնում էին քաղաքական, պայմանագրային-իրավական, տնտեսական եւ մշակութային բաժինները: Առանձին խումբ էին կազմում տարածքային բաժինները, որոնք տնօրինում էին երկրների որոշակի խմբի հետ իրականացվող հարաբերությունները: Հայաստանի ԱԳՆ-ում գոյություն ունեին Եւրոպական, Միջինարեւելյան, ԱՊՀ երկրների, Ասիայի, Ավստրալիայի եւ Օվկիանիայի, Հյուսիսային Ամերիկայի, Աֆրիկայի, Կենտրոնական եւ Լատինական Ամերիկայի բաժինները: Եւ իհարկե, կառուցվածքային իմաստով նոր ձեւավորվող նախարարությունում գործում էր բաժինների առանձին խումբ, առանց որոնց ընդհանրապես անհնար էր որեւէ գերատեսչության գործունեություն. ընդհանուր բաժին եւ գործերի կառավարչություն եւ այլն[34]: Թվում է, ինքնին հասկանալի է, որ արտաքին գերատեսչության հետ կապված մանրամասների քննար-

33 Տես ՀԱԱ, ֆ. 113, ց. 168, գ. 368, թ. 1-2:

34 Տես «Հայաստանի Հանրապետություն», 11 օգոստոսի 1992:

կումը անհրաժեշտ ուրվագծեր է հաղորդում Հայաստանի Հանրապետության միջազգային հարաբերություններում լիակատար սուբյեկտայնության ձեռք բերման ուղղությամբ ՀՀ իշխանությունների ծավալած գործընթացի ընդհանուր պատկերին: Չէ որ արտաքին հարաբերությունների ոլորտը հենց այն վճռորոշ բնագավառն է, որտեղ առավել ակնառու է դրսևորվում անկախ պետության ինքնիշխանությունը:

Արտաքին ուղղակի կապերի հաստատումը հենց երկրի ինքնուրույնության կարևորագույն չափանիշներից է: Այդ առումով կարևորվում է հատկապես օտարերկրյա ներկայացուցչությունների առկայությունը տվյալ երկրում եւ անկախ երկրի դեսպանությունների գոյությունը արտասահմանում: Հայաստանում, մասնավորապես մայրաքաղաք Երեւանում դեսպանատների տեղակայման հետ կապված հարցերը կարգավորելու նպատակով ՀՀ կառավարության հատուկ որոշմամբ ստեղծվել էր հատուկ հանձնաժողով, որի մեջ մտնում էին շահագրգիռ գերատեսչությունների եւ իշխանությունների ներկայացուցիչներ: Հանձնաժողովին պետական ունեցվածքի կոմիտեն կարճ ժամանակում տրամադրեց այն շենքերի ցուցակը, որոնք կարող էին հատկացվել օտարերկրյա դիվանագիտական ներկայացուցչություններին[35]: Մինչեւ դեսպանատներին առանձին տարածքների տրամադրման հարցերի լուծումը, ՀՀ-ում հավատարմագրված օտարերկրյա ներկայացուցչությունները տեղավորվել էին «Հրազդան» հյուրանոցի տարբեր հարկաբաժիններում: 1992 թ. վերջերի դրությամբ իրենց հավատարմագրերն էին ներկայացրել 13 երկրների դեսպաններ, իսկ լիարժեք կերպով Հայաստանում գործում էր 6 դեսպանություն[36]: 1992 թ. նոյեմբերի 6-ին Երեւանում ՀՀ նախագահին իր հավատարմագիրն էր հանձնել Ռուսաստանի Դաշնության առաջին արտակարգ եւ լիազոր դեսպան Վ. Ստուպիշինը[37]: 1992 թ. մարտին Հայաստանում արտակարգ եւ լիազոր դեսպանի մակարդակով էր ներկայացված նաեւ Ֆրանսիան: Այդ երկրի դեսպանն էր տիկին Ֆ. դը Արտինգը[38]: Իրանի, Չինաստանի. Գերմանիայի դեսպանությունները գործում էին ժամանակավոր հավատարմատարների մակարդակով[39]: 1992 թ. փետրվարի սկզբից սկսել էր գործել նաեւ Հայաստանում ԱՄՆ-ի ներկայացուցչությունը գործերի կառավարիչ Ս. Մանի գլխավորությամբ[40]: Առաջինը Հայաստանում իրենց մշտական ներկայացուցչությունների համար մայրաքաղաքի տարբեր մասերում առանձին տարածքներ ձեռք բերեցին Ֆրանսիան[41], Հունաստանը[42], Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունը[43], Ռուսաստանի Դաշնությունը[44], օգոստոսին հանդիսավորությամբ բացվեց Հայաստանում Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանատունը[45] եւ այլն:

Իր հերթին Հայաստանի Հանրապետությունը 1992 թվականի ընթացքում միջազգա-

35 Տես ՀԱԱ, ֆ. 113, ց. 168, գ. 40, թ. 1, «Հայաստանի Հանրապետություն», 11 օգոստոսի 1992:
36 Տես «Հայաստանի Հանրապետություն», 25 նոյեմբերի 1992:
37 Տես անդ, 7 նոյեմբերի 1992:
38 Տես «Հայաստանի Հանրապետություն», 27 մարտի 1992:
39 Տես անդ, 7 հուլիսի, 4 սեպտեմբերի, 25 նոյեմբերի 1992:
40 Տես անդ, 7 հուլիսի, 4 փետրվարի 1992:
41 Տես ՀԱԱ, ֆ. 113, ց. 167, գ. 484, թ. 1:
42 Տես անդ, թ. 2:
43 Տես անդ, գ. 554, թ. 1:
44 Տես «Հայաստանի Հանրապետություն», 25 նոյեմբերի 1992:
45 Տես անդ, 7 հուլիսի, 5 օգոստոսի 1992:

յին գործող բոլոր չափանիշներին համապատասխան, ֆունկցիոնալ առումով լիարժեքորեն գործող դեսպանատներ էր հիմնել ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորությունում, Իրանի Իսլամական Հանրապետությունում: Մոսկվայում Հայաստանի մշտական ներկայացուցչությունը ՀՀ նախագահի հրամանագրով վերափոխվեց ՌԴ-ում Հայաստանի դեսպանության եւ այլն[46]: Եթե փորձենք խորամուխ լինել քննարկվող ժամանակաշրջանում ծավալված միջազգային քաղաքական անցուդարձի մեջ, ապա պարզ կդառնա, որ նշված փաստերը պատմական նշանակություն ունեին ինքնիշխանության ուղիով ընթացող նորանկախ Հայաստանի Հանրապետության կյանքում, քանզի արտասահմանյան պետությունների եւ հատկապես աշխարհի հզոր երկրների հիմնավոր ներկայությունը ընդամենը ոչ լրիվ մեկ տարի առաջ անկախության ուղին որդեգրած Հայաստանում, նախ միջազգային ասպարեզում ՀՀ էական դերակատարության վկայությունն էր եւ միաժամանակ ինքնիշխանության ուղիով Հայոց պետության ընթացքի անշրջելիության խորհրդանիշը:

Օտարերկրյա տերությունների կողմից Հայաստանի Հանրապետության ճանաչման գործընթացը շարունակվում էր նաեւ հաջորդ տարիներին: 1997 թ. Հայաստանի Հանրապետությունը արդեն ճանաչել էին աշխարհի 128 երկրներ, որոնցից դիվանագիտական հարաբերություններ հաստատվել էին 114-ի հետ: Այդ երկրներից 73-ը ՀՀ-ում ներկայացված էին տարբեր մակարդակներով՝ ունեին արտակարգ եւ լիազոր դեսպաններ կամ գործերի ժամանակավոր հավատարմատարներ: Երկկողմ դիվանագիտական ներկայացուցչությունների մակարդակով Հայաստանը կապված էր 31 երկրի հետ: Միակողմ ներկայացված 42 երկրներից 32-ը իրենք էին ներկայացված ՀՀ-ում, իսկ 10 երկրներում էլ Հայաստանը միակողմանիորեն ուներ ներկայացուցչություններ: 41 երկրների հետ դիվանագիտական հարաբերությունները գտնվում էին կնքված փաստաթղթերի մակարդակում[47]:

ՀՀ անկախության 6-րդ տարում, երբ արդեն Հայաստանը, արտաքին հարաբերությունների առումով ես ներկայանում էր որպես լիովին կայացած պետություն, հանրապետությունում հավատարմագրված էին 61 երկրների դեսպաններ եւ ժամանակավոր հավատարմատարներ, որոնցից 12-ի՝ Ռուսաստանի Դաշնության, ԱՄՆ-ի, Անգլիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի, Չինաստանի, Ուկրաինայի, Հունաստանի, Իրանի, Սիրիայի, Լիբանանի եւ Վրաստանի ներկայացուցիչների նստավայրերը գտնվում էին Երեւանում: Երեւանում գործում էին նաեւ Կանադայի եւ Ուրուգվայի պատվո հյուպատոսությունները: Մնացած դեսպանների նստավայրերը գտնվում էին Հայաստանից դուրս եւ իրենց երկրները համատեղության կարգով ներկայացնում էին նաեւ ՀՀ-ում: Մոսկվայում կային իրենց երկրները ՌԴ-ում ներկայացնող ու նաեւ Հայաստանում հավատարմագրված 38, Կիեւում 6 դեսպաններ եւ այլն: Իսկ Հայաստանի Հանրապետությունը նույն ժամանակահատվածում արտասահմանյան պետություններում ուներ 30 դիվանագիտական ներկայացուցչություն, որոնք իրենց հերթին տեղակայված էին 27 երկրներում եւ ներկայացված էին 41 պետությունե-

46 Տե՛ս անդ, 18 սեպտեմբերի, 15, 30 հոկտեմբերի, 25 նոյեմբերի 1992, ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 68, թ. 8:
47 Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 2 հուլիսի 1997:

րում: Դրանց թվում էին 24 դեսպանություն, 2 գլխավոր հյուպատոսություն, 2 պատվո հյուպատոսություն եւ 2 մշտական ներկայացուցչություն[48]:

ՀՀ 1-ին արտգործնախարարը դարձավ ԱՄՆ 32-ամյա քաղաքացի Ռաֆֆի Հովհաննիսյանը՝ աշխարհահռչակ պատմաբան Ռիչարդ Հովհաննիսյանի որդին, 1915 թվականի եղեռնից մազապուրծ եղած արեւմտահայերի թոռը, որը թողնելով իր տունը Լոս Անջելեսում, իրավաբանի վեցանիշ աշխատավարձը եւ տարեկան ընդամենը 153 դոլարին համասար աշխատավարձով պտանձնել էր նորանկախ հայրենիքի արտաքին գործերի նախարարի պաշտոնը[49]: Հայաստանի արտաքին հարաբերությունները կայացնող գերատեսչության ղեկավարի օրինակը թերեւս հատկանշական կարելի է համարել նորանկախ հանրապետության կայացման ողջ գործընթացի համար: Հանուն արդարության հարկ է նշել, որ կառավարման համակարգի տարբեր օղակներում ներգրավվածների մի զգալի մասի քաղաքական վարքագծի հիմնական մոտիվացիան թերեւս մեծ հայրենասիրությունն էր, անկախ պետականության կայացմանը մինչեւ վերջ նվիրվելու մղումը: Հենց նման նվիրական աշխատանքի արդյունքն էր, որ 2000 թ. սկզբին կտրուկ ավելացել էր Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատած երկրներին թիվը՝ հասնելով 148-ի[50]:

Ինքնիշխան պետության կայացման գործում արտաքին դիվանագիտական գործունեության կարեւորության գիտակցմամբ էին պայմանավորված նաեւ 2000 թվականից պարբերաբար գումարվող ՀՀ դեսպանությունների, հյուպատոսությունների եւ միջազգային կազմակերպություններում ներկայացուցիչների տարեկան խորհրդաժողովները: 2001 թ. նոյեմբերին, երկրորդ խորհրդաժողովի ընթացքում նախագահական հրամանագրով դիվանագիտության ասպարեզում ունեցած նշանակալի ծառայությունների եւ Հայաստանի անկախության հռչակման տասներորդ տարեդարձի կապակցությամբ արտաքին գործերի նախարարության մի խումբ բարձրաստիճան պաշտոնյաներ պարգեւատրվեցին հանրապետության բարձրագույն պարգեւներով, որը, ինչ խոսք, Հայաստանի անկախության ամրապնդման գործում արտաքին դիվանագիտական գերատեսչության կատարած ծավալուն աշխատանքի բարձր գնահատման վառ վկայություններից էր:

48 Տես անդ:
49 Տես «Հայաստանի Հանրապետություն», 21 նոյեմբերի 1991:
50 Տես «Հայաստան. 1998-2007», խմբ. Ա. Վարդանյան, Երեւան, 2008, էջ 78: